

ՀԱՅ ԳՐՈՂՆԵՐԸ ԵՎ ՎՐԱՍՏԱՆԸ

Տ. Ա. ԿՍՐԱՊԵՏՅԱՆ

«Մի մեծ բուն կա՝ էդ ոգիների լավ հարաբերությունն է, որ հիմնված է դարերի պատմության վրա» — գրել է հայ մեծանուն բանաստեղծ Հովհ. Քումանյանը:

Այդպիսի դարավոր պատմություն ունի հայ և վրաց եղբայրական ժողովուրդների բարեկամությունը: Այն սկիզբ է առել խոր անցյալում և սերտ համագործակցության հողի վրա կոփվել ու ամրացել դարերի ընթացքում: Անդրկովկասի հարևան, բախտակից և իրար հարադատ ժողովուրդները՝ հայերը և վրացիները, անցյալում գտնվելով միևնույն քաղաքական և տնտեսական պայմաններում, հնագույն ժամանակներից սկսած պայքարել են ազատության և անկախության համար, միշտ օգնել են միմյանց և խղճով և սիրով ևն եղել բարեկամության ու սիրտ չեղծ դժգոհություններով: Նրանց եղբայրական անկաշառ փոխհարաբերությունները թրծվել ու կոփվել են օտարերկրյա զավթիչների դեմ մղված համատեղ պայքարում, Հոկտեմբերյան ռեօլուցիայի բույրերում:

Նրաւ դրացի ժողովուրդների դարեր հարատևող հոգեհարազատությունը, նրանց միատեղ վարած ազատագրական պայքարի գրվագները իրենց արտացոլումն են գտել այդ ժողովուրդների սրվածիկ և գրականության մեջ, սկսած հին ժամանակներից մինչև մեր օրերը: Հայ և վրաց պատմիչ-գրողների մոտ հաճախ ենք հանդիպում հիշատակությունների և նկարագրությունների հայ և վրաց ժողովուրդների եղբայրական փոխհարաբերությունների մասին:

Հայ գրականության փառան հատկանիշներից մեկը հնուց ի վեր եղել է ժողովուրդների, այդ թվում, հայ և վրաց ժողովուրդների բարեկամության գաղափարի պոետական մարմնավորումը: Հայ գրողներից շատերն իրենց ստեղծագործություններում ոգևորվել զովորդել են վրաց ժողովրդին, հիանալի սուղեր նվիրել Վրաստանին և նրա բնությանը: Վրաստանն իր «պատվական» թրխիս քաղաքով և «գլխավորներով» Երզն է XVII դարի վերջի և XVIII դարի սկզբի հայ բանաստեղծ Նաղուշ Հովնաթանը: Վրաստանը նույնպիսի չեղանկարն ու հարազատությանն են փառաբանել հանձարեղ Սայաթ-Նովան, Հազիբին, Շամշի Մելիքոն և ուրիշներ:

Վրաց ժողովրդի կյանքն իր արտացոլումն է գտել նաև ինչպես Սրբովյանի Լրկերում, նաև նշենք, որ հայ մեծ լուսավորիչ-գեղեցիկագիր գրական և մանկավարժական գործունեության մի մասը ծավալվել է թրխիսում, և բնական է, որ այդ ժողովրդասեր գրողը չէր կարող անտարբեր անցնել հայ ժողովրդին դարեր շարունակ բախտակից վրաց ժողովրդի կյանքի, նրա ապագայի և երկու հարևան ազգությունների փոխհարաբերությունների վրայով: Հայ ժողովրդի լուսավորության գործին նվիրված Սրբովյանի անսպառաքելի գործն չի մնացել նաև հարևան ժողովուրդների լուսավորության գործը: Այդ է հաստատում այն փաստը, որ հումանիստ գրողը, իր մասնավոր միջոցներով թրխիսում պանսիոն հիմնելով, հայերից բացի իր պանսիոնն է ներգրավում ալլազգի, որոնց թվում նաև վրացի Լեոնաների: Սրբովյանին մտահոգել է հայ և վրաց մատաղ սերնդի ճիշտ դաստիարակության խնդիրը, որի մեջ մտել է նաև մայրենի լեզվի նկատմամբ Լեոնաների մեջ սեր ամրապնդելու հարցը: Այդ է վկայում թրխիսի դավառական դպրոցի անուշ ի. Սրբովյանի «Ջենտլմենը» Անդրկովկասի դպրոցների վերատեսուչին: «Գաղափարական դրպրոցիս աշակերտների ծնողները, ընդհանրապես ամենքը, խնդրում են ինձ, որ դպրոցիս նաև առաջին դասարանում դասավանդվի իրենց որդիներին իրենց լեզուները՝ հայերեն և վրացերեն: Նրանց աշակերտի ցանկության կոտորումը բխում է բարե նպատակներից, քանի որ բարձր դասարան փոխադրված աշակերտները հետո դժվարանում են հաջողությամբ սովորել իրենց լեզուն, որովհետև նրանք սովորած չեն լինում այդ լեզուն առաջին դասարանում»:

¹ «Թրխիսի ինչպես Սրբովյանի», Լուս. Վ, Երևան, 1948, էջ 222:

և, Աբովյանը հատուկ հետաքրքրություն է ցուցաբերել գեպի վրաց իրականությունը և հատկապես թրքիսցիների նիստ ու կացը, սովորույթները: Այդ են ցույց տալիս «Առ հանդես»-ում, որի համար իստոյն Մթալ-Մմինդայ» բանաստեղծությունը և «Հաղարափեշեն» երգիծաբանական գործը: Առաջինում հեղինակն իր տպավորություններն է հաղորդում Մթածմինդա լեռան վրա և այնտեղ եղած վանքում ունեն տարի տեղի ունեցող տոնակատարության մասին և նշում, թե այդ տոնակատարությունը փրկություն կբերի՝ արդյոք ժողովրդին:

Հայերի և վրացիների սովորույթներն են նկարագրված նաև «Հաղարափեշեն» երգիծաբանական գործում, բայց այստեղ առավել կարևորը Աբովյանի քննադատական վերաբերմունքն է ցարական շինովնիկների նկատմամբ, որոնք արհամարհում են, ինչպես հեղինակն է ասում, վրաստանցիների սովորույթները և «մեր խալխին (հայերին և վրացիներին — Տ. Կ.) փուզն են դնում»: Երկրի առաջաբանում մեծ հայրենասերը բացատրում է, թե որն է երգիծաբանության դրդապատճառը. «Մ՛վ չի գիտի, որ տեղիցը վեր կենողը հենց մեր խեղճ խալխի վրա ու ոտը բարձրացնում» և «գրով, լեզվով խայտառակը անում ու ծաղրում: Աբովյանի ազգային արժանապատվությանը կաշում է շինովնիկության այն կարծիքը «թե վրաստանցիք (հայերը և վրացիները — Տ. Կ.) մարդի հետքում չի պետք է ըլին: Եվ ահա, մարդկային կերպարանքը կորցրած «խմաստունք», որը մարմնավորում է ցարական շինովնիկությունը, բնկնելով Կովկաս, սկսում է ծաղրել վրաստանցիների այն սովորույթները, որոնք մարդկային են, նա ծիծաղում է նրանց առաստաճեմունքի, հյուրասիրության վրա: Բայց առժամանակ «խմաստունք» լիախությունները տանող հայերի և վրացիների համբերությունը վերջանում է և նրանք այնպիսի ծեծ են տալիս «խմաստունին», որ նա սկսում է «հային օրհնել և վրացուն գովել»:

Այստեղ Աբովյանը ցույց է տվել հայ և վրաց ժողովուրդների միասնության ուժը, որը կարող է բազմաթիվ փորձությունների դիմանալ: Գովաբանելով այդ ժողովուրդների միասնությունը, հեղինակը միաժամանակ փառաբանել է Վրաստանը և ցանկացել նրա հզորությունը, որովհետև Վրաստանի հզորությունը է պայմանավորված Հայաստանի հզորությունը և ընդհանրապես:

Աստված Կախկեր շեն պահի, հաստատ,
նա մեզ տալիս է ուրախ սիրտ, դլաթ:
Աստված նրա բունյաթն միշտ հաղար տարի
Վալիմ, դաղըմի անպակաս անի:
Հաղար ձեռով մեզ հաղար փորձանքից,
Հաղար շառից, շառից մեզ ազատ պահի՛:

Աբովյանը վրացիներին համարել է իր ժողովրդին բախտակից ժողովուրդ: Ինչպես հայերի, այնպես էլ վրացիների քաղաքական բարձրը միմեկը նա տեսել է ուսման ճանապարհով: Բայց համոզված Աբովյանը հետևյալ սիմվոլիկ պատկերի միջոցով է տվել «Վերը Հայաստանի» վերածնունդը. «Մեկ ահագին շորս ջաղացի ջուր, դուրս ա պրծնում, դնում երևանու դաշար՝ որ ...գնա տրտում երախի հետ, Զանգին ու Գառնու գետն էլ մեջ անեն ու գնան Քուռն էլ մեջ անեն, իրենց արտասուքը նրանի հետ խառնեն ու տանին, Կասպից ծովու սիրտն ածեն, նրա աղի ջրումը կորչին, պարսից նավերը ջախքիտըրթ անեն, ուռաց նալերը իրանց քամակի վրա տանեն ու բերեն, որ ճամփին չհուսահատվի, չբեզարի ու էն բարի ոտը մեր աշխարհիցը չկտրի, որ բալբի մեր հայրենիքը՝ նրանց արծվի թևերի տակին զորանա, մեծանա, դարդերը մոռանա, ու էլ եղ՝ իր առաջին փառքին հասնի»²: Այստեղ ուշադրում է «մեր աշխարհիցը» և «մեր հայրենիքը» արտահայտությունները, որոնք վերաբերում են թե՛ Հայաստանին և թե՛ Վրաստանին:

Անդրադառնալով հայ և վրաց ժողովուրդների պատմական անցյալին Աբովյանը ցույց է տվել, թե ինչպես են այդ ժողովուրդները միասնական ուժերով պայքարել օտարազգի հարստահարիչների դեմ: Այսպես. «Վերը Հայաստանի» վեպի երրորդ գլխի հենց սկզբում պատկերված է հայության անկաշառ օդնությունը վրաց ժողովրդին: Հեղինակը գրում է. «Ինչ որ Պարսից կովի ժամանակ Հայք արին ...բարերը վկայություն կտան: Հալթաթ որ մեկ օր մեկ արդար, անաշառ մարդ Վրաստանու պատմությունը կգրի, էն ժամանակ կերեկի, թե Հայք ի՞նչ արին, ի՞նչ հավատարմություն են ցույց տվել տերությունը, ի՞նչ արին են վեր ածել:

¹ Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. I, Երևան, 1948, էջ 175:

² Խ. Աբովյան, Վերը Հայաստանի, Հայպետհրատ, 1959, էջ 127—128:

Ո՞վ չգիտի, որ էս հագագին, ինչ ժամանակ Հասան-խանը արևմտից, Աբաու-Միրզին արևելքից՝ ավազակի պես հանկարծ եկան, մեր սահմանը կոխեցին, մեր կողմը ամենեին խաբար չունենին: Ընչանք Ռուսը իրանց գործը կհավաքեին, Ղզլբաշը կարող էր սաղ Վրաստանը ոտի տակ առլ, եթե Հայք չլին ամեն անդ նրա ճամփեն կարելով: Եվ այնուհետև Արովյանը ցույց է տալիս այդ օղնություն մի քանի դրվագները:

Լավատելիլակ լինելով վրաց ժողովրդի պատմությունը, Արովյանը իր ստեղծագործություններում անդրադարձել է նաև եղբայրակից ժողովրդի պատմական անցյալին: Օրինակ, «Վերջին հրաժարական քաջագոր արքային Հերակլի» արձակ և չափածո դործում հեղինակը խոր հուզականությամբ է պատկերել պարսից հրոսակախմբերի (1795) գործած ոճիրները և օտար նվաճողների դեմ վրաց ժողովրդի տարած անձնուրաց պայքարը:

Պատկերելով վրաց իրականությունը և նրա բնաշխարհը, հայ դրողները առանձնապես շատ են շոշափել հայ և վրաց ժողովուրդների բարեկամության հարցը: Այդ թեմային նրանք դիմել են հատկապես անցյալ դարի 90-ական թթ., երբ ռեակցիոն ուժերի գաղափարախոսները ամեն կերպ աշխատում էին նացիոնալիզմի թույնով վարակել երկու դրկից ժողովուրդներին: Հայ առաջադեմ գրողները, արտահայտելով ժողովրդի ցանկությունը, պայքարել են ազգային առեւտություն սերմանող գաղափարախոսության դեմ և իրենց ստեղծագործություններում արտացոլել երկու ժողովուրդների եղբայրական սիրահարաբերությունները:

Այդ ազնիվ պայքարի ակնառու արտահայտություններից է հայ հանճարեղ դրող Հովհ. Թումանյանի գործունեությունը հանուն հայ և վրաց ժողովուրդների բարեկամության ամրապնդման: Սկսած XIX դարի 90-ական թթ. մինչև իր մահը մեծ բանաստեղծը թե՛ հրապարակախոսական և թե՛ գեղարվեստական գործերում բազմիցս անդրադարձել է այդ խնդրին:

Թումանյանը լի է եղել լավագույն ցանկություններով և անկեղծ զգացմունքներով դեպի բոլոր ժողովուրդները, մասնավորապես անդրկովկասյան եղբայրական ժողովուրդները, ակնածանքով է խոսել հայ և վրաց ժողովուրդների դարավոր բարեկամության մասին, շեշտելով նրանց բարստակից և հարազատ եղբայրներ լինելու հանդամանքը, դարերի ընթացքում թշնամիների դեմ մղած կռիվներում նրանց կողմից հանդես բերած համագործակցությունը:

Դեռևս 1892 թ., երբ նացիոնալիստները ամեն կերպ աշխատել են թշնամանք սերմանել հայ և վրաց ժողովուրդների միջև, Հովհ. Թումանյանը հանդես է եկել իր «Հաշտություն» բանաստեղծությամբ, ուր ընդգծում է երկու ժողովուրդների հին ժամանակներից եկող բարեկամությունը և կոչ անում ավելի ամրապնդել այն: Բանաստեղծն իրավացիորեն գտնում է, որ հայ և վրաց ազգերի բարօրություն համար ամենաառաջին և կարևոր պայմանը հաշտությունն է.

Այստեղ սուր ձեռքդ, մոտեցիր, բնկե՛ր,
Մի նայի՛ր ետե, ինչ է կատարվում
Մենք հո եղբայր ենք դարերից ի վեր,
Մեզ հո միևնույն կրակն է այրում²:

Թումանյանը անհուն սեր և հարգանք է տածել դեպի վրաց ժողովուրդը, որի արդյունքը պետք է համարել Վրաստանին նվիրված բանաստեղծությունների շարքը («Հաշտություն», «Ն. Բարաթաշվիլու դամբանի վրա», «Վրաստանի համար», «Վրաստանի ոգին», «Նվիր Վրաստանի բանաստեղծներին»): Այս գործերում Թումանյանը սրտաբուխ, անկեղծ զգացմունքներով մեծարել է վրաց ժողովուրդին, դրվատել ու բարձր է գնահատել նրա ազգային քանքարը, հոգեկան վստահությունները: Իր կյանքի մեծ մասն անցկացնելով վրաց ժողովրդի մեջ, մեծանուն բանաստեղծը շատ լավ է ճանաչել նրան և հմայվելով նրա բարձր հատկություններով, բարոյական վեհությամբ, ձգտել է բոլորին ծանոթացնել վրաց ժողովրդի առաքինություններին, մանավանդ նրա անկաշառ մարդասիրությանն ու բարեկամասիրությանը: Հակադրվելով «Վրաստանի թշնամանքից» խոսող ազգայնականներին, «Վրաստանի համար» բանաստեղծության մեջ Թումանյանը մեծ արվեստով և ջիւղ զգացմունքով դրվեբգել է վրաց ժողովրդի ազատասիրական ոգին:

¹ Խ. Արովյան, Վերջին հաշտություն, էջ 137:

² Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. I, Հայպետհրատ, 1950, էջ 449:

Ոչ ապաքեն գիտեն նրա,
Ոսոխները մինչ անգամ,
Աղ ու հացն է սիրել միշտ նա,
Միշտ աշխարհին բարեկամ:

Եվ ի՞նչպես չեն տեսնում ոմանք,
Նրա բնթացքն աննկուն,
Ո՞նց են ասում.— Իր բախտի տակ,
Նա ընկել է անկանգուն:

Եվ իր ձեռքը եթե համառ
Տարածում է հին վրկան
Ոչ թե դաժան գործի համար,
Այլ դեպ սլաշձառ ապագան:

Ոչ ապաքեն կովկասն անասառ,
Պատ է կանգնած մինչ երկին,
Որ չհաղթի բուրբ նրան,
Ինչքան սուրտ մոլեգին¹:

Այս բանաստեղծության մեջ արծարծված դադափարին, այն է՝ հայ և վրաց ժողովուրդների միջև գոյություն ունեցող շերտ սերո և անշահախնդիր եղբայրության զգացմունքի բնական լինելուն և գոյությունների ու անախորժությունների արհեստականությանը, այդ ժողովուրդների միմյանց համար «անասառ պատ» հանդիսանալուն՝ ընդդեմ արտաքին և ներքին թշնամիների, Թումանյանը անդրադարձել է նաև իր հրապարակախոսական հոգվածներում: Այսպես. մեծ բանաստեղծը, հիանալի իմանալով ժողովուրդների, մասնավորապես հայ և վրաց ժողովուրդների պատմությունը, 1918 թ. գրած մի հոգվածում անդրադառնալով Երկու ազգերի պատմությանը, գտնում է, որ ամենից մխիթարականը այդ պատմության մեջ հայերի և վրացիների փոխադարձ բարեկամությունն արտացոլող էջերն են: Թումանյանը նշում է, որ օտարազգի բռնակալների արշավանքների ժամանակ սրտառու է ևղել Վրաստանի և Հայաստանի փոխադարձ օգնությունը: Թումանյանը հատկապես ընդգծում է եղբայրական այն օգնությունը, որ ցույց են տվել վրացիները հայերին՝ սկսած հնադուր ժամանակներից մինչև Դավիթ Եփեսացուի ու Թամար թագուհու օրերը: «Մյուս կողմից էլ,— գրում է Թումանյանը,— Հայաստանն է շարունակ օգնության գալիս և միշտ պաշտպան հանդիսանում Վրաստանին Վարդանանց ու Վահանանց օրերից սկսած մինչև Դավիթ Բեկի օրերը: Եվ կամ վրաց պատմության մեջ հանդիպում ենք, թե ինչպես հայոց զորքերը վրաց զորքերի հետ միասին կռվում են Վրաստանի ազատության համար»²:

Պատմական այդ փաստերին լավատեղյակ Թումանյանը չէր կարող անտարբեր մնալ հայ և վրաց ժողովուրդների ոխերիմ թշնամիների՝ մենջևիկների և դաշնակների ազդագավան քաղաքականությունը: Մեծանուն բանաստեղծը շարունակ թե՛ գրավոր և թե՛ բանավոր խոսքով բարոյել է հայերի և վրացիների հղթարությունն ու համերաշխությունը, դրանում տեսնելով ժողովուրդների երջանկության նախապայմանը:

Հովհ. Թումանյանը ամեն կերպ աշխատել է կյանքից վերցված ամենաընդունակ օրինակներով ցույց տալ, որ դարավոր հարևանության մեջ ապրող հայ և վրաց ժողովուրդները միշտ կապված են եղել բարեկամական սերտ կապերով: 1919 թ. Լիան Կիպիանուն գրած պատասխան նամակի մեջ Թումանյանը պատմում է, թե ինչպես այդ տխուր օրերին Վրաստանի և Հայաստանի սահմանները բաժանող կամրջի երկու հակադիր ծայրերին կանգնեցրել էին վրացի և հայ զինվորների: «Նրանք երկուսն էլ հրացաններ ուներին բռնած՝ համառ նայում են իրար»³: Պարզվում է, որ այդ զինվորները երկար տարիների ընկերներ են, միասին լավ ու վատ օրեր են անցկացրել, «միասին կերել ու միասին քնել», բայց տերերի կամքով՝ նրանք հրացաններն ունեթե՛րեն, կանգնել են գեմ դիմաց: Սակայն զինվորները ձգտում են միմյանց: Նրանք իրենց շրջապատում գտնվող գյուղացիներին խնդրում են սատարել, թե արդյոք հրամանատարությունից ոչ ոք չի երևում: «Երբ իմանում են՝ որ չկան՝ վազում են, գալիս կամուրջի մեջտեղը գրկվում,

¹ Հ. օ. Կ. Թ. ո. Ժ. ան. յ. ան, Երկերի ժողովածու, հատ. I, էջ 187:

² Նույն տեղում, հատ. IV, Երեւան, 1951, էջ 420:

³ Հ. օ. Կ. Թ. ո. Ժ. ան. յ. ան

ներ ստեղծելու գործում, իր երկարամյա գրական գործունեության ընթացքում միշտ էլ հանդես է եկել որպես ժողովուրդների բարեկամության ջատագով և իր բարձրարժեք գեղարվեստական երկերի ու բովանդակային հրապարակախոսական հոդվածների միջոցով պրոպագանդել է ժողովուրդների բարեկամության գաղափարն ընդհանրապես և անդրկովկասյան ժողովուրդներին՝ մասնավորապես:

Դեռևս ուսանական առաջին ռևոլյուցիայի վերելքի տարիներին, երբ ցարական միապետությունն ամեն կերպ աշխատում էր ճնշել ռևոլյուցիան, ձգտում էր ազդային ատելություն բորբոքել ժողովուրդների միջև, դրանով իսկ վնաս հասցնել ռևոլյուցիայի վերելքին, Ավ. Իսահակյանը մյուս առաջադեմ գրողների հետ միասին պայքարի է ելնում ազդային ատելությունն սերմանող գաղափարախոսությունների դեմ և իր երկերում արտացոլում այդ ժողովուրդների եզրալուծվածն ու հոգեհարազատությունը: 1906 թ., Ավ. Իսահակյանը անդրադառնալով ուսանական առաջին ռևոլյուցիայի փոթորիկահույզ իրադարձություններին և տեսնելով, թե ինչ կարևոր նշանակություն ունի տարբեր ազգությունների միասնական պայքարը ռևոլյուցիայի հաղթանակի համար, գրում է «Շաքրո Վալիշվիլի» պատմվածքը, որի մեջ նկարագրում է վրեժի ցատումով առկեցուն վրացի ռևոլյուցիոներ Շաքրոյին, որը կարմիր դրոշմ ձեռքին, «անցած օս, վրացի և հայ ղյուղացիների դուխը, հեղափոխության գրոշակը բարձր բռնած՝ մորիկի նման սլանում էր հովիտներից դեպի լեռները, և լեռներից դառնալով»¹:

Անհուն սիրով է պատկերել հեղինակը ժողովրդի ազատության համար պայքարող վրացի հերոս Շաքրոյին, որ ընկնելով ցարական զահիճների ձեռքը, նույնիսկ ծանր խոշտանգումներից հետո չի դաժանանում ռևոլյուցիային: Պարտվում է ռևոլյուցիան: Ընկնում է և Շաքրոն: Բայց հեղինակը չի հուսահատվում, չի կորցնում իր հույսը գալիքի հաղթանակի նկատմամբ, նա զգում է, որ ապագայում կգան հազարավոր շաքրոներ և ժողովրդին կառաջնորդեն դեպի հաղթական ռևոլյուցիան: «Եվ հավատում է ժողովուրդը՝ թե նորից պիտի ծածանի իրավունքի և եղբայրության դրոշակը հայրենիքի այս թախծապատ լեռների և դլիսկոր կաղնիների վրա և պիտի ելնի գերեզմանից սիրելի և ազնավոր Շաքրոն՝ նորից բռնելու հեղափոխության սրբազան դրոշակը»...²:

Շաքրո Վալիշվիլի պատմվածքը ժողովուրդների բարեկամության մեծ ուժի հիանալի վավերագիր է:

Նույն տարիներին Ավ. Իսահակյանը գրում է «Ազատության Զանգ» ռեզոնանս բանաստեղծությունը, որտեղ կոչ է անում ցարիզմի ռանարգ լծի տակ ստրուկ մնացած կովկասյան ժողովուրդներին՝ փշրել բռնության շղթաները և անձնագոհ պայքարի դնով տեր դառնալ ազատ կյանքին:

Եվ որտա՛, Զանգ, և արթնացրու
Դարավոր նիրհից Մասիսն ու Կազբեկ,
Թափ տո՛ւր թևերդ, արծի՛վ լեռներո՛ւ,
Քնած առյուծնե՛ր, բաշերդ թոթվե՛ք³:

Ավ. Իսահակյանը հարազատի սիրով է պատկերել Վրաստանի բնությունը «Վրաց գուսանի երգը» գործում: 1926 թ. արտասահմանից առաջին անգամ հայրենիք վերադառնալիս մեծատաղանդ բանաստեղծը անցնում է Վրաստանի միջով և հիանալով հարևան երկրի բնության գեղեցկությանը գրում է. «Ամեն ինչ ինձ համար գրավիչ էր: Կարոտով նայում էի ձյունափառ լեռների շղթային, ճիգ էի անում համբոլ մանր ու խոշոր գագաթները, որոնք գնալով ուրվականանում էին, հյուծվում երկրի մեջ»⁴: Բանաստեղծին հուզել է ոչ միայն Վրաստանի բնությունը, այլև իր հնչյուններով հարազատ թվացող վրաց լեզուն. «Ահանջ էի դնում ուղեկից վրացիների զվարթ զրույցներին, որոնց հնչյունները հարազատ էին թվում ինձ: Բայց ափսոս, իմաստը չէի հասկանում, և մեղադրում էի ինձ, որ չեմ սովորել մեր դարավոր դրացու լեզուն»⁵:

Այնուհետև, Ավ. Իսահակյանը վրաց գուսանի բերանով գովերգում է վրաց ժողովրդի վերածնունդը. «Ազատարար Լենինը խորտակեց ցարի շղթաները, որ կապել էին բո ռուսերն ու ձեռները»:

¹ Ավ. Իսահակյան. Երկեր, հատ. 3, Երևան, 1959, էջ 22:

² Նույն աեղում, էջ 26:

³ Նույն աեղում, հատ. 1, Երևան, 1958, էջ 179:

⁴ Նույն աեղում, հատ. 3, էջ 369:

⁵ Նույն աեղում, էջ 369—370:

Կանաչել են ու ծաղկել են հիմա, իմ ազատ Սաքարթվելո, քո աչդինները ցնծում են ուրախությամբ հիմա, քո կարանները լցված են զինով հիմա, քո փեթակները անուշ մեղրով, իմ բախտավոր Սաքարթվելո:

Նրբատառք կարիճ զինվոր են դառել հիմա, իմ հին Սաքարթվելո, հրեղեն ձի են նստել հիմա, հրեղեն թուր են կապել մեջքիդ և կարմիր դրոշակ են բարձրացրել հիմա:

Այլևս ո՛վ կարող է քո հացն ու ազատությունը խել քեղինից, իմ քաջ Սաքարթվելո՞՛:

Վրաց ժողովրդի անցյալին ու ներկայիս վեթածնողին, հայ և վրաց ժողովուրդների դարավոր բարեկամությանը Ավ. Իսահակյանը, բացի իր շափածո և արձակ դորժերից, անդրադարձել է նաև մի շարք հրապարակախոսական հոգվածներում: Հիշենք նրա «Անդրկովկասի ժողովուրդների եղբայրությունը անասանելի է», «Վրաստանում սովետական իրավակարգի հաստատման 25-ամյակը», «Մեր խնդակցությունը», «Սրտագին ողբույն» հոգվածների շարքը, ինչպես նաև նրա ելույթը ՍՍՌՄ Գրողների միության Ռուսիայից անցկացված 1941 թ. Քրիլիսիում իր ծննդյան 65-ամյակի կապակցությամբ անցած խոսքը: Հայ և վրաց ժողովուրդների բարեկամության մասին խոսելով, Ավ. Իսահակյանը իր վերոհիշյալ հոգվածներում և ելույթներում աշխատել է ցույց տալ այդ ազգերի եղբայրության պատճառները և պատմական արժանիքները: «Անդրկովկասի ժողովուրդների եղբայրությունը անասանելի է» հոգվածում Իսահակյանը ցույց է տվել, թե որտեղից է գալիս հայերի և վրացիների հոգեհարազատությունը. «Վրացին, հայը, աղբյուրանքին՝ դարերի նվիրական ավանդներով և տրագիկաներով կապված մի համերաշխ ընտանիք են՝ աճած միևնույն հողի վրա և հասակ առած միևնույն արևի տակ: Յուրաքանչյուրն ունի իր ազգային, անհատական հատկությունները, բայց բոլորը միասին ունեն ընդհանուր բնասանկան հոգեբանություն, որը գալիս է երկուր ժամանակների մեջ միասին ապրած պատմությունից, արտաքին թշնամիների դեմ միասին վարած պայքարից, մեր ընդհանուր շահերից և հոգսերից, մեր կենսափորձից, մեր լքնաղ և վեհ պելլաժից»²:

Մի այլ տեղ Իսահակյանն ավելի հանգամանորեն է կանգ առնում հայ և վրաց ժողովուրդների ներկայիս հոգեհարազատության ու փոխըմբռնման պատմական ակունքների վրա. «...ամեն մի երկրի ու ժողովուրդ իր ուրույն դեմքն ու հոգին ունի, և այս շատ զեղեցիկ է: Բայց ինչու, ինձ՝ ոչ վրացու համար, այնքան ծանոթ և հարազատ էին նրանք (Վրաստանը և նրա բնությունը — Տ. Կ.): Դա բխում է ենթագիտակցական, խոր զգայական, հին և հնագույն խավերից, որոնք զնում, սուղվում են պատմական և նախապատմական մշտնի լեռների մեջ, Հայ և վրաց ժողովուրդները դարերի սկզբներից, միջինական ՄՏԵՐ—Ամիրանի շրջաններից, եղել են ուղեկիցներ, գործակիցներ: Միասին կերտել են, յուրաքանչյուրը պահելով իր ինքնատիպությունը, այն փառավոր զարմանալի կուլտուրան, որ բովանդակ Սովետական Միության կուլտուրաների մեջ ամենահինն է անվերապահորեն վկայված:

Միասին գոյության արյունոտ, անհասանջ կոնիվ են մղել օտարերկրյա նվաճողների դեմ: Նզել են դաժան ժամանակներ, երբ Հայաստանը վահան է հանդիսացել ժողովրդական հրոսակների դեմ, իսկ Վրաստանը հյուրընկալող եղբայրական ապաստան հայերի համար:

Հայտնի է, որ գոյություն է ունեցել երկու ժողովուրդների միջև սրբազորված սովորություն. ազգերի պատմության մեջ մի հուզիչ սիմվոլ: Որպեսզի ավելի ամրապնդեն եղբայրությունը—շատ տեղերում, ուր խառն են ապրել վրացի և հայ, վրացի մայրերը կաթ են տվել հայ երեխաներին, և փոխադարձաբարձ:

Կան փաստեր, որոնք ապացուցում են, որ Վրաստանը ու նրա ժողովուրդը միշտ էլ եղել են հայ ականավոր բանաստեղծի ուշադրության կենտրոնում: Այդ են վկայում Իսահակյանի հետևյալ խոսքերը, որ նա արտասանել է 1941 թ. Քրիլիսիում ունեցած իր ելույթում. «Նրբ են անցյալ տարի իմ գրական նպատակների համար շրջում էի Կախեթիայում և Իմերեթիայում, տեղն ու տեղը, մայր հողի վրա, տեսնելու տիպեր, կենցաղ, լսելու ֆուկլորն ու մելոսը—ինձ այնպես թվաց թե՛ վաղուց եղել եմ այդ վայրերում, վաղուց շնչել եմ նրանց հոգեկան մթնոլորտում, վաղ մանկությունից շառաչել են ինձ վրա այդ վայրերի դարավոր ստիկներն ու կաղնիները»³: Այստեղ արտահայտելով իր սերը դեպի Վրաստանը և նրա բնությունը, Իսահակյանը միաժամանակ ի հայտ է բերում մի հանգամանք, որից կարելի է եզրակացնել, որ վերը նշված փաստերը լիովին շեն ընդգրկում նրա այն ստեղծագործությունները, որտեղ նա այս կամ այն

¹ Ավ. Իսահակյան, Նրկեր, հատ. 3, էջ 371:

² Ավ. Իսահակյան, Հանուն հայրենիքի, Երևան, 1945, էջ 52:

³ Նույն տեղում, էջ 52—53:

⁴ «Սովետական Վրաստան», 1941, № 36:

կերպ արտացոլել է հարեան վրաց ժողովրդի կյանքը: Պետք է ենթադրել, որ այդպիսի գործեր գեղեկա կան, որոնք սակայն լույս չեն տեսել: Այդ են հաստատում վրաց բանաստեղծ Սիմոն Զիքովանու հիշողությունները Ավ. Իսահակյանի վերահիշյալ՝ 1940 թ. ճանապարհորդության մասին. «Սերնից մի քիչ առաջ,— գրում է Ս. Զիքովանին,— Ավետիք Իսահակյանը ժամանեց Վրաստան և սովետական վրաց գրողների հետ միասին ճանապարհորդեց մեր երկրի այլևայլ անկյունները, ծանոթանալով վրաց ժողովրդի նոր կենցաղին, նրա նվաճումների և կուլտուրական շիարարության հետ: Ընդ սմին նա մեծ ուշադրությունը և հետաքրքրությունը դիտում էր վրացական կուլտուրայի հնագույն հուշարձանները:

Վրաստանում ճանապարհորդության միջոցին ստացած տպավորությունները, վրաց ժողովրդի կյանքի ուսումնասիրությունը և մեր ժողովրդի հուշարձանների հետ ծանոթանալը Ավ. Իսահակյանին տվեց նոր ստեղծագործական նյութ, որը պետք է մտնի նրա «Ուստա Կարո», մեծ վեպի մեջ»¹:

Պահպան հետաքրքրություն չի ներկայացնում նաև այն փաստը, որ վրաց ժողովրդի կյանքի հետ ծանոթանալու համար, Ավ. Իսահակյանը բացի Վրաստանում ճանապարհորդելուց ուսումնասիրել է նաև վրաց գրականության լավագույն գործերը. «Ա. Կադրեզի «Էլգուչան» ինձ սիրելի տվեց վրացում,— գրել է Իսահակյանը «Արու-Լալա-Մահարի» վրացերեն թարգմանության առթիվ գրված երկտողում,— և նրա շնորհիվ Վրաստանն ու վրացիները զարժան ինձ համար հարազատ»:

Այժմ համարյա չկա մի սովետահայ գրող, սովետահայ բանաստեղծ, որ գրած չլինի Վրաստանի և վրացիների, հայ և վրաց ժողովուրդների բարեկամության մասին: Նրանց այդ գործերը համակված են այն խոր համակրանքով, որ հայ ժողովուրդը տածում է դեպի Սովետական Վրաստանի հաջողություններն ու նվաճումները: Սակայն խոսել բոլորի մասին մի հոգվածի սահմաններում հնարավոր չէ: Այստեղ մենք կանգ կառնենք նրանցից մի քանիսի վրա:

Հայ պրոլետարական գրականության հիմնադիր Հ. Հակոբյանը, Վրաստանը համարելով իր երկրորդ հայրենիքը («Թիֆլիս»), առաջիններից մեկին է եղել, որ հիացմունքով ու խանդավառությամբ նկարագրել է վրաց աշխատավորության հերոսական աշխատանքը՝ երկրի քայքայված տնտեսությունը վերականգնելու («Ձաթախը»), երկիրը էլեկտրիֆիկացնելու և ջրանցքներ կառուցելու համար: Այդ իրադարձությունների նշանակությունը Հ. Հակոբյանը այսպես է արտահայտել իր «Ռիոնգէս» բանաստեղծության մեջ.

Դու խոսում ես Քուիսիսի ամեն տան հետ,
Մութ հյուղերին ու գյուղերին նոր կյանք շնչում,
Քեզ եկել է այցելության մի ծեր պոետ,
Ջահել ուժիդ, արև լույսիդ հազար ողջուն²:

Անվեհեր մարտիկ, Վրաստանում կոմերիտական շարժման առաջին կազմակերպիչ Բորիս Չնկելաձեի հմայել կերպարն իր պոետական վառ մարմնավորումն է գտել Ողիշե Չարենցի «Բորիս Չնկելաձեի արձանը Թբիլիսիում» բանաստեղծության մեջ: 1936 թ. Վրաստանում սովետական կարգերի հաստատման 15-ամյակի առթիվ, Չարենցը գրում է «Տաղ սրտառուչ եղբայրական Վրաստանին» իսկապես սրտառուչ բանաստեղծությունը, որտեղ գունեղ պատկերներով նկարագրում է հայ և վրաց ժողովուրդների դառն գոյամիճակն անցյալում և գծում նրանց համատեղ անցած ուղին դեպի լուսավառ ռապսոդիա:

Նրանք՝ մեկտեղ ու միասին՝ մենք պայքարի մի վտեմ—
Նվ թափեցինք, թոթափեցինք ստրկության լուծը սև.
Երկրի հետ ողջ այնուհետև միասնաբար, միասիրտ,
Կյանք կերտեցինք արևային, մարդկության այդ անրասիր...
Նվ միասին ու միասիրտ՝ գնում ենք արդ հաղթական
Դեպի երգի՜, կյանքի՜, լույսի՜ մի անարատ ապագա.
Դեպի շքեղ խոյանքների մի խրախճան վարդապետ—
Նվ ես—պոետս երկրի Հայոց—հզում եմ խոսք սրտաբուխ,
Երկի՜ր վերձի՜ր, վսեմ դարձիդ դեպի անմար մի գարուն,
Ուր բուրբուռ կյանքն է անձի՜ր, անծայրածի՜ր երկարում...³:

¹ «Заря Востока», 1940, № 298.

² Հ. Հակոբյան, Բանաստեղծություններ, Երևան, 1935, էջ 134:

³ Ե. Չարենց, Հնախր երգեր, Երևան, 1935, էջ 282—283:

Նույն 1936 թ. Ազատ Վշտունին գրում է «Սաքարթվելո» ծոն-բանաստեղծությունը և հնչեղ տողերով գովերգում Վրաստանը, հայ և վրաց ժողովուրդների եղբայրությունը:

Քուռն է հոսում ստինքը լիք կաթով՝ մոր պե՛ս չերմ, հարազատ,
Կապից ծովին և Արաքսին գրկում՝ որպե՛ս չերմ հարազատ,
Ինչպես երեք ժողովուրդներ մտիկ՝ աշխպե՛ս չերմ, հարազատ.
Գգվող մոր պե՛ս, Եղբայր որպե՛ս ու չերմ աշխպե՛ս, Սարա՛րթվելո՛ւ:

Վրաստանի սեզ լեռները, նրա որդիների ըմբոս ոգին, հայ և վրաց ժողովուրդների բարեկամությունն է գովերգել Նաիրի Զարյանը «Սովետական Վրաստանին» բանաստեղծության մեջ: Զարյանը մեծ հպարտությամբ է ընդգծում երկու ժողովուրդների լավագույն ապագային հասնելու միասնական ձգտումը: Իսկ «Վրաստանի ճանապարհներով» գեղարվեստական ընդարձակ ակնարկում Զարյանը տվել է նոր Վրաստանի աշխատանքային բեղուն եռուզեռի առանձին գրվագներ:

Իր մտահղացման ինքնատիպությամբ աչքի է ընկնում Գ. Սարյանի «Երգը Վրաստանից» բանաստեղծությունը: Պոետի ահանջին, որպես մթնում լացող եղեգի հառաչ, դեռ հնչում է տխուր մի երգ, որ հյուսել է «վշտից հարբած» վրաց ժողովրդի «երգիչ որդին»։ գեղջուկը աչքերը թաց աշխատել է, աշխատել այդ երգը շուրթերին: Բայց ահա մարտերով ու համառ կովով վրաց ժողովուրդն իր համար բերում է մի լուսապայծառ առավոտ: Այնուհետև բանաստեղծը բնորոշ գծերով պատկերում է նոր, Սովետական Վրաստանը, և այժմ

Որպես դարնան ծիծառի հեք,
Որ ճախրում է օդում նորից,
Հասնում է ինձ ուրախ մի երգ
Զքնաղագեղ Վրաստանից՝:

Սողոմոն Տարոնցին Վրաստանին նվիրել է բանաստեղծությունների մի ամբողջ շարք, որտեղ իր լայն արացայություն է գտել Սովետական Վրաստանի նոր առօրյան, Այդ բանաստեղծությունների մեջ աչտապա Վրաստանը հարուստ և հզոր մի երկիր է՝ ձգված Կախեթիայից մինչև Սվանեթի, մինչև Սև ծովը, որտեղ ծխնելուղենքն ու սոսիները կանգնած են իրար կողքի, և որը լայնածիր շրջապատը լցնում է հուզով, ջանքով, երգով:

Խոր հուզականությամբ է առգործված Հ. Շիրազի «Վրաց ժողովրդին» բանաստեղծությունը: Հեղինակը ջերմաշունչ տողերով է պատկերում հայ և վրաց ժողովուրդների բարեկամությունը:

Հնուց է վառվել օջախները մեր՝
Ուրախ խառնվել ծուխն ու բուրն իրար,
Ինչպես լեռնային երկու աղբյուրներ,
Իրար են գգվել՝ ծովերում անծայր՝:

Հայ և վրաց ժողովուրդների եղբայրությունը մարմնավորող մի շարք գործերով հանդես է եկել Սարմենը: Հատկապես ուշադրության արժանի գործ է «Հայոս և Քարթլոս» պոեմը, որի ասեղծման համար հիմք է ծառայել XI դարի վրաց պատմիչ Լեոնտի Մրովելու միջոցով հետագա ունեցողների հասած հայ և վրաց ժողովուրդների բարեկամությունը սիմվոլացնող լեզնեպը՝ Հայոսի և Քարթլոսի եղբայր լինելու մասին:

Հուզիչ ու գեղեցիկ է Հ. Սահյանի հանրահայտ «Վրաց ժողովրդին» բանաստեղծությունը: Ստեղծելով հայ և վրաց ժողովուրդների եղբայրությունը սիմվոլացնող թարմաշունչ, անմահ պատկերներ, ցույց առնով այդ ժողովուրդների անխախտ սերը, պոետը գրում է,

Եղբայրներ են ծնված օրից
Աշխարհում հայն ու վրացին,
Եվ դառնություն չի խառնվել
Երբեք նրանց ալ ու հացին:

¹ Ա. Վշտունի, Բանաստեղծություններ և պոեմներ, Երևան, 1951, էջ 79:

² Գ. Սարյան, Հատընտիր, 1951, էջ 61:

³ «Սովետական Վրաստան», 1951, № 57:

Մեր սրտերը մեկ են եղել
Անհիշելի ժամանակից,
Զի բաժանել երբեք նրանց
Կյանքում ո՛չ մի սահմանագիծի:

Վրաստանին նվիրված բանաստեղծությունների շարքով հանդես է եկել նաև Վ. Դավթյանը: Այդ գործերում հեղինակը գովերգում է հայ և վրաց ժողովուրդների անխախտ եղբայրական փոխհամագործակցությունը, այն ժողովուրդների, որոնց միջև գցված է «եղբայրության ոսկե կամուրջ», երգում է Վրաստանի հարուստ բնությունը, նրա այգիները, «վաստակի մարդկանց» լեռնային պարի փոթորիկը, կախարդանքը և վրացիների եղբայրական մաքուր սերը: Վ. Դավթյանը նկարագրում է, թե ինչպես Ռազմա-վիրական ճանապարհով «հողի բերքի ու բարու» գումակն է ձգվում և Քրիիսին ողողում առատությունը: Այդ շարքում հատկապես հետաքրքրական է հուզիչ է ծերունի Քվաշախիայի խոսքը: Նա դիմելով իր հայ հյուրերին ասում է.

Մենք իրարու հետ ապրել ենք դարեր՝
Մեր լեռների պես մեջք մեջքի տված,
Իրար օջախից կրակ ենք տարել,
Իրար հետ կիսել և՛ դինի, և՛ հացը...

Ժողովուրդների իրավահավասարության և եղբայրական համագործակցության գեղարվեստական վերարտադրումը ալյուր ձևեր է բերել համաշխարհային նշանակություն. այդ գործում իր զգալի լուծան է ներդրում նաև սովետահայ գրականությունը: Հայաստանի գրողներն ու բանաստեղծները, արտահայտելով հայ ժողովրդի անկեղծ սերն ու համակրանքը գեպի մեր մեծ միության ժողովուրդները, այդ թվում նաև վրաց եղբայրական ժողովուրդը, գրանով իսկ ափսիս են ամրապնդում նրանց վսեմ բարեկամությունը:

АРМЯНСКИЕ ПИСАТЕЛИ И ГРУЗИЯ

Т. А. КАРАПЕТЯН

(Р е з ю м е)

«Грузинский и армянский народы, находясь в прошлом в одинаковых политических и экономических условиях, бок о бок ведя борьбу за свободу и независимость, помогая и поддерживая друг друга, прониклись самыми горячими чувствами взаимной любви и преданности.

Рожденное в веках духовное родство, совместная освободительная борьба нашли свое яркое отображение в искусстве и литературе этих народов, начиная с древнейших времен до наших дней.

Многие из армянских писателей в своих произведениях восторженно воспевают Грузию, посвящая вдохновенные строки ее народу и природе.

Жизнь грузинского народа нашла свое отображение и в произведениях Хачатуря Абовяна. Об этом свидетельствуют стихотворение «О празднестве на святой горе Мтацминда» и сатирическое произведение «Азарпеша».

Абовян считал, что грузины связаны с его родным народом общностью судеб. Освобождение как армян, так и грузин он связывал с постоянным дружеским сотрудничеством этих народов с великим русским народом. Это свое убеждение Абовян раскрыл в романе «Раны Армении».

Рисую жизнь грузинского народа, природу страны, армянские писатели уделяли особое внимание вопросам дружбы между армянским и грузинским народами. К этой

¹ Հ. Սահյան, Ծխածանր ասփռասանում, Երևան, 1953, էջ 98:

² Վ. Դավթյան, Լուսաբացը լեռներում, Երևան, 1957, էջ 65—66:

теме они обращались особенно часто в 90-х годах прошлого века, когда идеологи реакционных сил всячески старались отравить ядом национализма трудящихся Закавказья. Передовые армянские писатели, выражая волю народа, вели борьбу с идеологией, сеющей межнациональную вражду, и в своих произведениях отображали братские взаимоотношения двух народов.

Ярким проявлением этой благородной борьбы во имя укрепления дружбы между армянским и грузинским народами может служить деятельность Ов. Туманяна. Начиная с 90-х годов XIX в., вплоть до самой смерти великий поэт как в публицистических, так и в художественных произведениях не раз обращался к этому вопросу.

После установления в Закавказье советского строя блестящие традиции армянской классической литературы нашли благодатную почву для своего дальнейшего развития. Как видные деятели армянской советской литературы (Ав. Исаакян, Е. Чаренц, Н. Зарян, Г. Сарян и др.), так и ее молодые представители (Ов. Шираз, А. Сагян, В. Давтян и др.), продолжая лучшие традиции своих предшественников-демократов, нередко обращаются к художественному воплощению идеи дружбы между грузинским и армянским народами. Писатели Армении отображают в своих произведениях расцветшую под советским солнцем Грузию, ее чудесную природу, талантливый народ, создающий свое светлое будущее.